Հոկտեմբերի 4-ին տեղի ունեցավ Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի հերթական նիստը, որը վարեց հանձնաժողովի նախագահ Սիմոն Տեր-Սիմոնյանը:

Հանձնաժողովը քննարկել է 15 բարեգործական ծրագիր:

Մասնավորապես, քննարկվել և հաստատվել են՝

«Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Բավրա գյուղի համայնքային կենտրոնի կահավորում», «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Շուշիի շրջանի Քարինտակ գյուղի համայնքային կենտրոնի կառուցման հեղինակային հսկողություն» և «Հաղարծին» վանքային համալիրի ճանապարհի հիմնանորոգում» ծրագրերը.

«Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Շատջրեք համայնքի ոռոգման ջրի և Մաքենիս համայնքի խմելու ջրի ջրատար համակարգերի վերանորոգում», «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սառնակունք համայնքի հանդիսությունների տան ջեռուցման համակարգի տեղադրում», «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի թիվ 2 մանկապարտեզի ջեռուցման համակարգի տեղադրում», Ոգտագործված ցինկապատ խողովակների մատակարարում Արագածոտնի մարզի Թալինի տարածաշրջանի համայնքներին», «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Գորայք համայնքի մանկապարտեզի համար մետաղական կոնստրուկցիաներով խաղասարքերի մատակարարում և տեղադրում», «Շինարարական նյութերի մատակարարում Գեղարքունիքի մարզի մի շարք համայնքներին» ծրագրերը.

«Ֆրութֆուլ Արմենիա» հիմնադրամի կողմից իրականացվող «ՆՈՒՌ - Նոր ուսումնական ռազմավարություն» ծրագիրը.

«Էյ Թի Փի» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի Հանրապետություններում ծառատունկի իրականացում» ծրագիրը.

NATO-ի հետազոտություններ հանուն խաղաղության (Science for Peace-SfP) ծրագրի շրջանակներում Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանի (ՀՊՃՀ) մասնագետների կողմից հայաստանում իրականացվող «Ջրի պահպանման և անվտանգության տեխնիկական նվաճումների ներգրավումով ջրում աղտոտվածությունների հայտնաբերում և հեռացում» ծրագիրը.

«Կամրջակ» սոցիալ-բարեգործական հասարակական բարեգործական կազմակերպության կողմից իրականացվող «Տավուշի մարզի Բերդավան համայնքի մանկա-պարտեզի տանիքի հիմնանորոգում» և «Արարատի մարզի Մասիս քաղաքի թիվ 6 դպրոցի մասնակի վերանորգում» ծրագրերը.

Նիստում քննարկվել և հաստատվել են նաև նախկինում հաստատված ծրագրերի շրջանակներում իրականացվող հարակից գործարքներ և տարբեր կազմակերպությունների հասցեներով ստացված բարեգործական բեռների ներմուծման ծրագրեր: